

Ե Ր Թ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՅԱԽԱՐԱՅՐ

ԱՄՊՐՈՊԱՅՈՅՁ հանդոյն միրկայ շանթածին
 Յարեւելից դիմէ հրոսակ ժանտ Պարսկին ,
 Յոտին 'ի սրտի սարսին աղինք սրտաթուռ ,
 Գողան Հեղենք , քծնին զտոխքն իբր ըսկունդ ,
 Այլ մէք որգիք Հայկայ յաղատըն Մասեաց
 Ի դռինչ փանդուան ձայն տամք 'ի զէն Սասանեանց :

Ի զէն 'ի զէն ընթացուք ,
 Հայրենասէրքդ աննրկունք ,
 Կուսացին սուսերք 'ի ժանդոյն ,
 Ի ճապաղիս վարդագոյն ,
 Եւ յետս հարցին թշնամիք ,
 Ձի Խաչն է մեր զորաւիգ :

Յերբ սուգ այրւոյն , ողբ հէք մանկուոյն աղածրի ,
 Յերբ անմահին անուռն փառաց պղծեսցի .
 Հայկազունք , վրէժ դռնն սիրուն Հայրենիք ,
 Վըրէժ քաջաց լաւաց հարանց մեր ոգիք .
 Ու որ տայ զորոտն վարդեալ 'ի թեւս ամպրոպաց ,
 Վըրէժ ձայնէ վեհն յեթերին 'ի բարձանց :

Ի զէն 'ի զէն ընթացուք ,
 Հայրենասէրքդ աննրկունք , և այլն :

Ի հարան կոյս , 'ի հարան կոյս դունդագունդ .
 Ո՛վ , որ յանդուսպ վառիք 'ի սէր հոգեսնունդ ,
 Ժիր պարմանիք , ծաղիւնք խաղից Եդեմին ,
 Ճեռք ըսկայից քաջաղէղանց Հայ դարմին ,
 Տղմուտ գետոյն անգր 'ի յափունքս դալար ,
 Հարսւլ , վանեղ 'ի Հայրենեաց զեկն օտար :

Ի զէն 'ի զէն ընթացուք ,
 Հայրենասէրքդ աննրկունք , և այլն :

Ո՛հ , իբր անժոյժ վառին աշխոյժք Հայկազանց
 Յեռանդնազար շըշուկ խաղմին մահաղդեաց ,

Իբրք վրնջեն խրինջախրոխտ երիւարք
Մինչ ռաղմական հնչեն ուժգին դոռ բարբառք .
Ձայն անդրադարձ գընայ որոտ առ որոտ ,
Յարին բոսոր փայլի հօրոտն եւ մօրոտ :

Ի զէ՛ն ՚ի զէ՛ն ընթասցուք ,
Հայրենասէրքդ աննրկունք , և այլն :

Յայնժամ զիւրդ վարդեալ ՚ի սօս հրանրժոյգ
Դէմ թնամույն սլանայ զուարթ եւ առոյգ ,
Իբր ՚ի թաւուտս սնդեալ ըզհետ եղջերուաց ,
Իիւցազն Հայոց , պաշտպան Կրօնի , Հայրենեաց .
Շառափնաթափի ՚ի ճօճ սրբոյն երկասյրի
Բիւր կառափունք ՚ի գլլ գլորին ՚ի դաշտի :

Ի զէ՛ն ՚ի զէ՛ն ընթասցուք ,
Հայրենասէրքդ աննրկունք , և այլն :

Իսկ մինչ հարեալ յորսայս ՚ի դաշան անկանի ,
Անմահ զուարթունք շնչեն զոգին դեռատի ,
Իբր ՚ի ծաղիկն զեփիւռ ըզխունին քաղցրաբայր .
Նա հսկային ննջէ ըզքուն վեհ ու անդոյր ,
Դալարազուարճ լերինք սընարք են գլխոյն ,
Աստղափրթիթ երկին ծածկոյթ իւր մարմնոյն :

Ի զէ՛ն ՚ի զէ՛ն ընթասցուք ,
Հայրենասէրքդ աննրկունք , և այլն :

Ո՛հ , անմահ է , անմահ անուեն յուխտեան
Հայ դիւցազին , ազատութեան ախոյեան .
Յորչափ կանգուն՝ յիշեն ըզնա Հայրենիք ,
Յողբս համակին հովիտք , բբլուբբ եւ լերինք ,
Ուիք արտասուաց գընան Մասեաց ՚ի սարէն ,
Տրտմեալ տերեւք ուռեաց անոյշ ցօղ կաթեն . . . :

Ի զէ՛ն ՚ի զէ՛ն ընթասցուք ,
Հայրենասէրքդ աննրկունք , և այլն :

Ողջն ապա՝ երկիր , հրաշից աստարեղ ,
Ողջն հուսի նուազ սէր մեր սրտից , ողջն քեզ .
Երթանք պուղել ըզպիղծ Պարսից ջոլիւր ժանա ,
Երթանք խղղել զստրկութեանն պարուանդ ,
Ի յաղթանակ ազատութեան խաչակիր՝
Կամ քաղցր ՚ի նինջ փառօք ՚ի ծոցդ լուսալիւր :

Ի զէ՛ն ՚ի զէ՛ն ընթասցուք ,
Հայրենասէրքդ աննրկունք , և այլն :

Ողջամբ կաց՛իր, անմահդ Մասիս ճիւղնակող,
Յաւիտենից յիշատակաց վե՛հ կոթող.

Ողջամբ եւ դուք զուարթուն հովիտք քառեկաց,
Սկունք վըճիտք Բիւրակնայ սուրբ աղբերաց,
Քարածորան սահանք ուղից Երասխայ,
Կապոյտ երկին, վե՛հ հովանիք, դա՛շտք ծաղկեայ:

Ի զէ՛ն ՚ի զէ՛ն ընթացուք,
Հայրենասէրդ աննրկունք, և այլն:

Ողջն եւ քեզ քաջամարտիկըդ Վարդան,
Միահեծան լծակ բաղդին Հայութեան,
Որ վառեցար ՚ի զէն ՚ի զարդ խաչանիչ՝
Յանձառ լուսոյն եւ եթ գաւառս ակնապիչ,
Լէ՛ր առաջնորդ ոտից մերոց գայթ ՚ի գայթ
Ուր ակնախտիդ փառաց անմահ ճառագայթ:

Ի զէ՛ն ՚ի զէ՛ն ընթացուք,
Հայրենասէրդ աննրկունք, և այլն:

1876 Փետրվար 12

Ա. Ե. Կարապետեան Կ. Պոլսէջի
Ա. Ղալի. Ժառ. Վարժարանի:

